նապատը և ՊԽԴ թուին այնտեղ էր*, բայց, երևի, նոյն թուականի վերջերին կամ ՊԽԴ թուի սկզբներին դարձել էր կրկին իւր վանքը։ Ըստ Թովմայի ՊԽԴ—ՊԾԵ խաղաղութեան տարիներ էին. «Եւ անօրէնն Յուսուփ փախեաւ ի Զաղաթայէն յ844 թուականէն մինչև ց855, այլ ոչ կարաց գալ յաշխարհս մեր»։ «Եկին ամենայն ցրուեալքն և սկիզբն արարին շինութեան։ Եւ ծաղկեցաւ ուսումնականօքն ի ձեռն խաղաղութեան ողորմութեամբն Աստուծոյ մեսասան ամ ծովաբոլորս»։ Խաղաղութիւնը խանգարւում է ՊԾԵ (=1406) թուին. անօրէնների հալածանքից փախչում է Սարգիս Սորբեցու յաջորդ Վարդան վարդապետը «յերկիրն Տոսպ», «ի սուրբ ուխտն Սալնապատին», ուր և վախճանւում է**։ Այս տեղեկութիւնները միանգամայն հաստատում են, թէ Թովման ՊԽԴ թուականին արդէն Սուհարայում պէտք է լինէր, որով և լրանում է նորա 12 ամեայ ուսման շրջանը այնտեղ՝ Կիրակոս Բանասէր վարդապետի տուած տեղեկութեան համեմատ։ Մեծոփայ վանքի կամ նախնական կրթութեան շրջանի վերջին տարին, ուրեմն, ՊԽԴ (=1294) թուականն էր։

Այժմ գտնենք առաջին տարին։ Թովման վարդապետական աստիճան է ստացել Գրիգոր Տաթևացուց ՊԾԹ (=1420) թուի ձմրան սկզբին և այնուհետև վարժապետութիւն արել 35 տարի մինչև իւր կեանքի վախճանը։ Գաւազան ստանալուց առաջ՝ մի տարի ուսել է Մեծոփայ վանքում և երկու տարի Տաթևում Գրիգոր Տաթևացու մօտ***։ Այս 38 տարիների վերայ աւելացնելով Սուհարայի շրջանի 12 տարին, ընդամենը կլինի 50 տարի. իսկ, արդ, Թովմայի կեանքը Մեծոփայ վանքը մտնելուց մինչև մահը 60 տարի է տևել, որով մանկական շրջանի ուսման համար կմնայ տաս տարի, ՊԼԴ—ՊԽԴ (1385—1395) թուերը։

Յովհաննէս Մեծոփեցու հետ՝ իրրև իւր մանկութեան ուսուցչի և հոգևոր հօր՝ Թովման յիշում է և Մատթէոս ոմն կրօնաւորի, որ 1410 թուին օգնել է Թովմային, պատրաստելով «զնիւթս քարտիսի», մեր Մատենադարանի № 2103/2065 ձեռագրի գրութեան ժամանակ, բայց մանրամասնութիւններ նորա մասին չ'գիտենք†։

Համեմատաբար աւելի տեղեկութիւն ունինք Թովմայի ուսման Սուհարայի կամ Երկրորդ շրջանի մասին։ Այստեղ սկզբում նա սովորել է Սարգիս Սորբեցի նշանաւոր վարդապետի մօտ, որ Յոհան Ո-

---

* Փիրղալէմեան. Նօտարք Հայոց. Կ. Պոլիս. 5։

** Մեծոփեցի Պատմ. 49. 50. 41։

*** Նոր Նիւթեր. Ար. 753/4. (16)։ Մեծոփեցի. Պատմ. 60, 53. Կիրակոս Բանասէր. Ար. 744/5. (7/8)։

† Մեծոփ. Պատմ. 16. Նոր Նիւթեր. Ար. 753, 756. 761. (16. 19. 24)։